ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2022 թվականի N 1626- Ն

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ՝

1) պետական կառավարման մարմինների կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով 2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա կազմակերպվող երկու փուլով մրցույթի ընթացակարգի՝

ա. շրջանակում նախաորակավորված մասնակիցների հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, մասնակիցների կողմից հայտերով ներկայացվելիք փաստաթղթերը, ինչպես նաև ընտրված մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացվելիք որակավորման կամ պայմանագրի ապահովման չափերին ներկայացվող պահանջները սահմանվում են

երկրորդ փուլի հրավերով՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ: Ընդ որում որակավորման ապահովում ներկայացնելու պահանջը սահմանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության 2-րդ նախադասությամբ սահմանված պայմանը,

բ. երկրորդ փուլի հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը,

գ. կազմակերպման նկատմամբ չեն կիրառվում կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 830-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի պահանջները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ